

Տպագրված է ընդամենը 2 օրինակ
ՕՐԻՆԱԿ 2

ԳՐԱՆՑՎԱԾ Է

Կազմված է «26» սեպտեմբերի 2022 թ.
Բաղկացած է 34 էջից
Prepared on «26» September 2022
Consists of 34 pages

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ԱՆՁԱՆՑ
ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺՆԻ ԿՈՂՄԻՑ 16.11.2016թ.
գրանցման համար՝ 273.120.934743
ՀՎՀՀ՝ 02655115
16.11.2016 թ. գրանցված կանոնադրության
միջոցով 3 փոփոխությունը գրանցված է
իրավաբանական անձանց
պետական ռեգիստրի կողմից
14. 10 2022 թ.

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Վեոլիա Ջուր»
փակ բաժնետիրական ընկերության
միակ բաժնետիրոջ
2022թ. Սեպտեմբերի 26-ի որոշմամբ
APPROVED BY
Resolution on 26th September 2022
Of the sole shareholders of the
“Veolia Djur” closed joint stock company

աշխատակից՝


Ն. Շիրազյան *Վ. Կարամյան* *Ս. Կարամյան*

«ԿՈՆՏԵՆՆԱԿԱՆ ԴԻԱԼՈԳ» ՓԲԸ
Սպասարկման գրասենյակի
գործառույթներ իրականացնող
օպերատոր

Գլխավոր տնօրեն/General director՝

Marianna Shahinyan
Մարիաննա Շահինյան
Marianna Shahinyan

«26» սեպտեմբեր 2022 թ.



«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
(Նոր խմբագրություն)

“VEOLIA DJUR”
CLOSED JOINT-STOCK COMPANY
CHARTER

(New edition)

Երևան-2022

Yerevan-2022

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ **ընկերություն**) առևտրային կազմակերպություն հանդիսացող տնտեսական ընկերություն է, որի կանոնադրական կապիտալը բաժանված է ընկերության նկատմամբ բաժնետերերի պարտավորական իրավունքը հավաստիացնող և սույն կանոնադրության 12 կետով սահմանված թվով բաժնետոմսերի:

2. Ընկերության լրիվ ֆիրմային անվանումն է.

Հայերեն՝ «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերություն
Անգլերեն՝ “Veolia Djur” Closed Joint Stock Company

Ընկերության կրճատ ֆիրմային անվանումն է.

Հայերեն՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ

Անգլերեն՝ “Veolia Djur” CJSC

3. Ընկերության գտնվելու վայրն է. Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0025, Արմյան փ. 66 հասցեն:

4. Ընկերությունը կարող է իրականացնել Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ **ՀՀ**) օրենքով և այլ իրավական ակտերով չարգելված ցանկացած տնտեսական գործունեություն: Օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակներով Ընկերությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի առկայության դեպքում:

5. Ընկերությունն իրավաբանական անձ է, ունի ինքնուրույն հաշվեկշիռ, իր անվանմամբ կլոր կնիք, դրոշմեր և ձևաթղթեր: Ընկերությունն ունի օրենքով սահմանված կարգով գրանցված ֆիրմային անվանում և ապրանքային նշան: Ընկերությունն իր անունից կնքում է պայմանագրեր, իրականացնում է սույն կանոնադրությանը չհակասող գործունեություն, ձեռք է բերում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրում է պարտավորություններ, կարող է հանդես գալ դատարանում որպես հայցվոր կամ պատասխանող:

6. Ընկերությունը համարվում է ստեղծված և կարող է գործել որպես իրավաբանական անձ ընկերության օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով պետական գրանցման պահից: Ընկերությունը գործում է առանց գործունեության ժամկետի

I. GENERAL PROVISIONS

1. Veolia Djur” Closed Joint Stock Company (hereinafter referred to as the “Company”) is an economic enterprise representing a commercial organization, the charter capital of which is divided into shares certifying the ownership rights of shareholders towards the Company in number specified in Clause 12 of this Charter.

2. The Company’s full name is:

in Armenian – «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերություն
in English – “Veolia Djur” Closed Joint Stock Company

The Company’s short name is:

in Armenian – «Վեոլիա Ջուր» ՓԲԸ

in English – “Veolia Djur” CJSC

3. The location of the Company is 66 Abovyan str., Yerevan, 0025, Republic of Armenia.

4. The Company may conduct economic activity not prohibited by laws or other legal acts of the Republic of Armenia (hereinafter “RA”). The Company may conduct certain types of activities defined by the law only given the presence of an appropriate license.

5. The Company is a legal entity, has a separate balance, round seal, stamps and letterheads with its firm name. The Company has a Company name and brand names registered according to procedures specified by laws. The Company may sign agreements on its behalf, conduct activities not in conflict with this Charter, acquire property and personal non-property rights, bear liabilities, act in the courts as a plaintiff or defendant.

6. The Company is considered to be established and can operate as a legal entity from the moment of Company’s registration according to procedures stipulated by laws and other legal acts. The Company operates within not limited period of time.

սահմանափակման:

7. Ընկերությունն իր գործունեությանը համապատասխան տիրապետում, օգտագործում և տնօրինում է իր գույքը:

8. Ընկերությունն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով բանկային հաշիվներ բացել Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում:

9. Ընկերությունն իր պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում սեփականության իրավունքով իրեն պատկանող ամբողջ գույքով:

10. Ընկերությունը պատասխանատու չէ իր բաժնետերերի պարտավորությունների համար, իսկ Ընկերության բաժնետերերը պատասխանատվություն չեն կրում Ընկերության պարտավորությունների համար և իրենց պատկանող բաժնետոմսերի արժեքի սահմաններում կրում են Ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը:

11. Ընկերությունն իրավունք ունի ստեղծել մասնաճյուղեր, ներկայացուցչություններ, հիմնարկներ, հիմնադրել իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող դուստր և կախյալ ընկերություններ կամ մասնակցել դրանցում, ինչպես նաև մասնակցություն ունենալ այլ կազմակերպություններում: Նշված հարցերով որոշումներն ընդունվում են ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից, եթե սույն կանոնադրությամբ կամ ՀՀ օրենքներով այլ բան նախատեսված չէ:

II. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ԵՎ ԴՐԱ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՐԳԸ

12. Ընկերության կանոնադրական կապիտալը (այսուհետ՝ **Կանոնադրական կապիտալ**) կազմում է բաժնետերերի ձեռք բերած բաժնետոմսերի անվանական արժեքից: Կանոնադրական կապիտալը կազմում է 3,000,000,000 (երեք միլիարդ) ՀՀ դրամ, որը բաժանված է 300 (երեք հարյուր) հատ հասարակ անվանական բաժնետոմսերի (այսուհետ՝ **Բաժնետոմսեր**), մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 10,000,000 (տասը միլիոն) ՀՀ դրամ: Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերը լրիվ վճարված են:

13. Ընկերությունը կարող է փոփոխել (ավելացնել կամ նվազեցնել) իր

7. The Company possesses, uses, and disposes its property according to its activities.

8. The Company has the right to open bank accounts in banks of the RA and foreign states according to procedures stipulated by the law.

9. The Company bears responsibility with all the property owned by it on the basis of ownership right under all its obligations.

10. The Company is not responsible for liabilities of its shareholders and the shareholders of the Company are not responsible for Company's liabilities and assume the risks of losses related to the Company's activities within the limits of the value of shares owned by them.

11. The Company has the right to establish branches, representations, daughter and subsidiary companies with the status of legal entities or hold shares in the charter capital of those as well as hold participation in other organizations. Resolutions regarding above mentioned issues shall be taken by the General Meeting of Shareholders of the Company (hereinafter "Meeting"), unless otherwise stipulated by this Charter or RA laws.

II. THE CHARTER CAPITAL OF THE COMPANY AND ITS CHANGE PROCEDURES

12. The charter capital of the Company (**hereinafter the Charter Capital**) is composed of the nominal value of the shares acquired by the shareholders. The Charter Capital is 3,000,000,000 (three billion) drams of the Republic of Armenia (AMD), which is divided into 300 (three hundred) ordinary nominal shares (hereinafter referred to as shares) each amounting to 10,000,000 (ten million) AMD. The Company's allocated shares have been fully paid.

13. The Company may change (increase or decrease) its charter capital by resolution of the

կանոնադրական կապիտալի մեծությունը, որի մասին որոշումն ընդունվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից (այսուհետ՝ **Ժողով**):

14. Կանոնադրական կապիտալի փոփոխման հարցով որոշումներ կայացնելու համար ժողովի գումարման ծանուցումը պետք է պարունակի՝

1. Կանոնադրական կապիտալի փոփոխման շարժառիթները, եղանակն ու չափը,
2. սույն կանոնադրության փոփոխման նախագիծը՝ կապված Կանոնադրական կապիտալի փոփոխման հետ,
3. բաժնետոմսերի քանակը և դրանց անվանական արժեքի ընդհանուր գումարը, որը պետք է ստացվի Կանոնադրական կապիտալի փոփոխման արդյունքում:
4. Նոր բաժնետոմսերի տեղաբաշխման դեպքում՝ դրանց տեղաբաշխման կարգը և ժամկետները, բաժնետերերի իրավունքները՝ ըստ այդ և նախկինում տեղաբաշխված բաժնետոմսերի:

15. Ընկերության Կանոնադրական կապիտալի չափը կարող է մեծացվել ընկերության բաժնետոմսերի անվանական արժեքի ավելացմամբ կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխմամբ:

16. Լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման մասին որոշմամբ պետք է սահմանվի՝

1. լրացուցիչ տեղաբաշխվող բաժնետոմսերի քանակը՝ այդ բաժնետոմսերի հայտարարված քանակի սահմաններում.
2. լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման ժամկետները և պայմանները, այդ թվում՝ դրանց ձեռքբերման նախապատվություն ունեցող բաժնետերերի և այլ արժեթղթերի սեփականատերերի միջև տեղաբաշխվող բաժնետոմսերի արժեքը:

17. Ընկերության բաժնետերերն ունեն Ընկերության կանոնադրական կապիտալում իրենց բաժնին համապատասխան Նոր բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունք օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված

General Meeting of Shareholders of the Company (**hereinafter referred to as the “Meeting”**).

14. Notification of holding a Meeting for making decisions on the issue of changing the charter capital shall include:

1. the reasons, way and extent of change of the Charter Capital
2. the draft of the amendment to this Charter related to the change of Charter Capital
3. the number of shares and the total amount of their par value, which will be obtained as a result of changing the Charter Capital.
4. in case of allocation of new shares – the terms and process of their allocation, the rights of the shareholder as per that and previously allocated shares.

15. The Company Charter Capital may be increased through increasing the par value of the Company’s shares or through allocation of new shares.

16. The following issues shall be specified in the resolution on allocation of additional shares:

1. the number of additional shares being allocated within the limits of the declared number of shares
2. terms, time frame and conditions of allocation of additional shares including the par value of shares being allocated to shareholders and holders of other securities having preemptive right to purchase those shares.

17. The Company’s shareholders have the preemptive right to buy new shares proportionate to their shareholding in the charter capital of the Company in accordance with procedure stipulated by the law and this charter.

կարգով:

18. Ընկերությունն իր գործունեության ֆինանսական արդյունքներն ամփոփելուց հետո՝ բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ կարող է տեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման միջոցով ավելացնել իր Կանոնադրական կապիտալը՝

1. շահույթի մի մասը փոխանցելով Կանոնադրական կապիտալ:
2. Կանոնադրական կապիտալի, պահուստային կապիտալի և արտոնյալ բաժնետոմսերի լուծարային և անվանական արժեքների տարբերության ընդհանուր գումարը գերազանցող գույքը (գուտ ակտիվները) կամ դրա մի մասը փոխանցելով Կանոնադրական կապիտալ:

19. Ընկերությունը բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու միջոցով Ընկերությունը չի կարող ավելացնել իր Կանոնադրական կապիտալն ավելի, քան ժողովի հաստատած վերջին հաշվեկշռում կամ վերջին աուդիտի արդյունքներով սահմանված Ընկերության գուտ ակտիվների արժեքն է:

20. Ընկերությունը չի կարող բաժնետոմսեր թողարկել իր առևտրային գործունեությամբ առաջացած վնասները ծածկելու համար:

21. Կանոնադրական կապիտալի նվազեցումը կարող է կատարվել՝

1. բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացմամբ.
2. բաժնետոմսերի ընդհանուր քանակի պակասեցմամբ, այդ թվում՝ ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում, դրանց մի մասի ձեռքբերմամբ և մարմամբ:

22. Կանոնադրական կապիտալի նվազեցման նպատակով Ընկերության կողմից բաժնետոմսեր կարող են ձեռք բերվել միայն բաժնետոմսերի սեփականատերերի համաձայնությամբ: Ընդ որում, այդ նպատակով Ընկերությանն առաջարկված բաժնետոմսերի ձեռքբերումն Ընկերության պարտականությունն է: Եթե ձեռքբերման առաջարկված բաժնետոմսերի քանակը գերազանցում է համապատասխան որոշմամբ սահմանված քանակը, ապա Ընկերությունը

18. After summarizing the financial results of its activities, the Company can increase its Charter Capital by increasing par value of allocated shares by resolution of the Meeting through:

1. transferring part of the profit to the Charter Capital
2. transferring to the Charter Capital the property (net assets) exceeding the total amount of the difference of liquidation and par values of Charter Capital, reserved capital and privileged shares or its part.

19. The Company may not increase its Charter Capital by means of increasing the par value of the Company's shares by more than the value of net assets of the Company according to the last balance sheet approved by the Meeting or as identified by the results of the last audit.

20. The Company may not issue shares to cover the losses resulted from its commercial activities.

21. The Charter Capital may be reduced by means of:

1. reduction of the par value of shares
2. reduction of the total number of shares including in cases stipulated by the RA Law by means of purchase or paying back of the part of those shares.

22. With the purpose of reducing the Charter Capital the Company may buy shares only with the consent of the owners of shares. In this context, the purchase of shares offered to the Company with this purpose is the duty of the Company. If the number of shares offered for purchase exceeds the number of shares specified by the appropriate decision, the shares shall be purchased by the Company from the shareholders in the proportion to their offers.

բաժնետերերից բաժնետոմսերը գնվում են նրանց առաջարկներին համամասնորեն:

23. Ընկերությունը Կանոնադրական կապիտալի չափի նվազեցման մասին որոշում ընդունելուց հետո 30-օրյա ժամկետում գրավոր ծանուցում է այդ մասին իր պարտատերերին: Պարտատերերն իրավունք ունեն նման ծանուցումը ստանալուց հետո 30 օրվա ընթացքում Ընկերությանից պահանջել պարտավորությունների կատարման լրացուցիչ երաշխիքներ, Ընկերության պարտավորությունների դադարեցում կամ վաղաժամկետ կատարում, ինչպես նաև դրա հետ կապված վնասների հատուցում:

III. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐԺԵՐՈՒԹԵՐԸ

24. Ընկերությունը կարող է թողարկել և տեղաբաշխել բաժնետոմսեր, պարտատոմսեր և օրենքով նախատեսված այլ արժեթղթեր: Ընկերության թողարկվող և տեղաբաշխվող բաժնետոմսերն ու պարտատոմսերը գրանցվում են և ոչ փաստաթղթային ձևի են:

25. Ընկերության կողմից թողարկված բաժնետոմսերի անվանական արժեքները պետք է լինեն միևնույնը: Բաժնետոմսն անբաժանելի է: Եթե երկու կամ ավելի անձինք սեփականատեր են մեկ բաժնետոմսի, ապա նրանք համարվում են մեկ բաժնետեր:

26. Ընկերությունը ժողովի որոշմամբ կարող է համախմբել տեղաբաշխված բաժնետոմսերը, որի արդյունքում Ընկերության երկու կամ ավելի բաժնետոմսերը փոխարկվում են նույն տեսակի մեկ նոր բաժնետոմսի, կամ բաժանել դրանք, որի արդյունքում Ընկերության տեղաբաշխված մեկ բաժնետոմսը փոխարկվում է նույն տեսակի երկու կամ ավելի բաժնետոմսերի: Նշված երկու դեպքերում սույն կանոնադրության մեջ կատարվում են Ընկերության տեղաբաշխված և հայտարարված բաժնետոմսերի քանակի և անվանական արժեքի համապատասխան փոփոխություններ:

27. Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարման միջոց կարող են լինել գույքը, ներառյալ՝ գույքային իրավունքները, արժեթղթերը, մտավոր սեփականությունը, դրամական միջոցները:

28. Ընկերությունն իրավունք ունի թողարկել պարտատոմսեր և օրենքով նախատեսված այլ արժեթղթեր: Պարտատոմսերի և այլ արժեթղթերի

23. Within a 30-day period after making the decision on reduction of the Charter Capital, the Company gives written notification to its creditors. Within a 30-day period after receiving such notification, the creditors have the right to claim from the Company additional guarantees of fulfillment of the Company's obligations, termination or early fulfillment of the Company's obligations as well as compensation against losses incurred due to the latter.

III. THE SECURITIES OF THE COMPANY

24. The Company can issue and allocate shares, bonds and other securities specified by law. The issued and allocated shares and bonds of the Company are registered and in a non-paper form.

25. The par values of shares issued by the Company should be the same. The share is indivisible. If two or more persons are owners of one share, they are considered as one shareholder.

26. Under resolution of the Meeting the Company may consolidate the allocated shares as a result of which two or more shares of the Company shall be converted to one new share of the same type, or to split those as a result of which one allocated share of the Company shall be converted into two or more shares of the same type. In both mentioned cases relevant amendments shall be made to the number and the par value of allocated and declared shares of the Company in this Charter.

27. The shares of the Company may be paid by the property including property rights, securities, intellectual property, money.

28. The Company has the right to issue bonds and other securities specified by the law. The allocation of bonds and other securities shall be performed in accordance with the

տեղաբաշխումն իրականացվում է Կառավարող խորհրդի որոշմամբ, որով և պետք է սահմանվեն դրանց մարման ձևը, ժամկետները և պայմանները: Ընկերության պարտատոմսերի և այլ արժեթղթերի դիմաց վճարման միջոց կարող են լինել գույքը, ներառյալ՝ գույքային իրավունքները, արժեթղթերը, մտավոր սեփականությունը, դրամական միջոցները: Պարտատոմսերը պետք է ունենան անվանական արժեք: Ընկերության կողմից թողարկված բոլոր ապահովված պարտատոմսերի անվանական արժեքների գումարը չպետք է գերազանցի Կանոնադրական կապիտալի մեծությունը կամ այն ապահովման գումարը, որը տրամադրված է Ընկերության կողմից պարտատոմսեր թողարկելու նպատակով: Պարտատոմսերը չեն կարող թողարկվել մինչև Ընկերության Կանոնադրական կապիտալի լրիվ վճարումը:

29. Ընկերությունը կարող է թողարկել միաժամանակյա, ինչպես նաև տարաժամկետ (Ընկերության կողմից սահմանված ժամկետային հաջորդականությամբ) մարման ժամկետով պարտատոմսեր: Պարտատոմսերի մարումն իրականացվում է դրամով կամ այլ գույքով. պարտատոմսերի թողարկման մասին որոշման համաձայն: Ընկերությունը կարող է թողարկել.

1. Ընկերության գույքի գրավով ապահովված պարտատոմսեր.
2. երրորդ անձանց կողմից պարտատոմսերի թողարկման համար տրամադրված երաշխավորությամբ ապահովված պարտատոմսեր.
3. առանց ապահովման պարտատոմսեր:

30. Ընկերությունը կարող է պարտատոմսերի վաղաժամկետ մարման հնարավորություն ընձեռել՝ դրանց սեփականատերերի ցանկությամբ: Այդ դեպքում պարտատոմսերի թողարկման մասին որոշմամբ սահմանվում են մարվող գումարի մեծությունը և այն ժամկետը, որից սկսած պարտատոմսերը կարող են ներկայացվել վաղաժամկետ մարման:

31. Ընկերությունը Կառավարող խորհրդի որոշմամբ կարող է թողարկել փոխարկվող պարտատոմսեր և այլ արժեթղթեր, որոնք տալիս են Ընկերության պարտատոմսերը և այլ արժեթղթերը բաժնետոմսերի

decision of the Supervisory Board, which should define the way, terms and conditions of their repayment. The bonds and other securities of the Company may be paid by the property including proprietary rights, securities, intellectual property, money. The bonds shall have a par value. The sum of par values of all secured bonds issued by the Company should not exceed the value of the Charter Capital or the amount of the guarantee, which is provided by the Company for issuing of such bonds. Bonds cannot be issued until full payment of the Company's Charter Capital.

29. The Company may issue one-time, as well as deferred redemption bonds (with timing (schedule) specified by the Company). The repayment of bonds shall be done with money or other property according to the decision on issuing the bonds. The Company can issue:

1. bonds secured with mortgage of property of the Company;
2. bonds secured with guarantees provided by third parties;
3. unsecured bonds.

30. The Company may provide an opportunity for early repayment of bonds at will of their owners. In such a case in the decision on issuing the bonds the amount of repayment and the term when the bonds may be submitted for early repayment shall be specified.

31. In accordance with the decision of the Supervisory Board the Company may issue convertible bonds and other securities, which give the right of converting the bonds and other securities of the Company to shares or the

փոխարկման կամ Ընկերության բաժնետոմսերի արտոնյալ ձեռք բերման իրավունք: Ընդ որում, Ընկերությունն իրավունք չունի տեղաբաշխել փոխարկվող պարտատոմսեր և այլ արժեթղթեր, եթե ըստ տեսակների և ձևերի հայտարարված բաժնետոմսերի քանակը պակաս է նշված տեսակների և ձևերի բաժնետոմսերի քանակից, որոնք անհրաժեշտ են փոխարկվող պարտատոմսերը և այլ արժեթղթերն Ընկերության համապատասխան բաժնետոմսերի փոխարկելու հնարավորությունն ապահովելու համար:

32. Պարտատոմսերի տոկոսը վճարվում է դրանց վրա նշված ժամկետում, բայց ոչ պակաս, քան տարին մեկ անգամ՝ անկախ Ընկերության ֆինանսական վիճակից և ստացված շահույթից (բացի շահույթում մասնակցող պարտատոմսերից): Եթե պարտատոմսերը տեղաբաշխվում են անվանական արժեքից ցածր գներով, տարեկան տոկոսները պարտատոմսի տիրոջը կարող են չվճարվել, որը պետք է սահմանվի պարտատոմսերի թողարկման մասին որոշմամբ և նշված լինի պարտատոմսում: Պարտատոմսերով տոկոսների չվճարման կամ սահմանված ժամկետում պարտատոմսերը չմարելու դեպքում Ընկերությունը կարող է լուծարվել դատական կարգով:

IV. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

ՊԱՐՏԱՎԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

33. Ընկերության յուրաքանչյուր բաժնետոմս տալիս է իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը միևնույն իրավունքները: Ընկերության բաժնետերերն ունեն Ընկերության այլ բաժնետերերի կողմից վաճառվող բաժնետոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունք: Եթե որևէ բաժնետեր ցանկանում է վաճառել (վաճառքի առաջարկ անել, վաճառքի կամ գնելու առաջարկ անելուն հրավիրել կամ անհատույց հատկացնել) իրեն սեփականության իրավունքով պատկանող բաժնետոմսերը, ապա նա այդ մասին ծանուցում է Ընկերությանը՝ համապատասխան գրություն ուղարկելով Ընկերության Գլխավոր տնօրենի անունով: Գրությունը պետք է պարունակի վաճառվող բաժնետոմսերի քանակի, գնի և վաճառքի այլ էական պայմանների մասին տվյալներ: Գրությունը ստանալու պահից

privileged right to buy shares of the Company. In this context the Company does not have the right to allocate convertible bonds and other securities if the number of declared shares of such type and form is less than the number of shares of the mentioned types and forms which are necessary to provide the opportunity to convert such bonds and other securities into respective shares of the Company.

32. The bonds interest shall be paid within the term indicated in the bond but not less than once a year regardless of the financial situation and profit (except for bonds included in the profit) of the Company. If the bonds are allocated with prices lower than the par value of the bond the annual interests may not be paid to the owner of the bond, which shall be specified in the decision on issuing the bonds and indicated on the bond. For failing to pay the bond interest or repay the bonds within the specified term, the Company may be liquidated by court decision.

IV. RIGHTS AND DUTIES OF COMPANY SHAREHOLDERS

33. Each share of the Company grants the same rights to the shareholder. The Company shareholders have the preemptive right to buy shares being sold by other shareholders of the Company. If a shareholder wishes to sell (place a sale offer, invite to bid or offer or grant) shares owned by him/her, he/she shall notify the Company by sending a relevant notice to the General director of the Company. The notice should contain data on the number, price and other important conditions of sale of shares being sold. Within two days after receiving the above-mentioned notice the General director sends this notice containing its total text with a registered letter or hands over (with appropriate signature on receipt) to other shareholders of the Company. The date of sending of the ordered letter or handing it over is considered to be the day of offering shares

երկու օրվա ընթացքում Գլխավոր տնօրենը՝ այդ գրությունը կամ դրա ամբողջական տեքստը ներառող ծանուցումը պատվիրված նամակով ուղարկում է կամ համապատասխան ստորագրությամբ առձեռն հանձնում է Ընկերության մյուս բաժնետերերին: Պատվիրված նամակի ուղարկման կամ առձեռն հանձնման ամսաթիվը համարվում է բաժնետոմսերի վաճառքի առաջարկման օր: Բաժնետերը, որը ստացել է այդպիսի ծանուցում, ծանուցումն ստանալու պահից հետո 30 (երեսուն) օրվա ընթացքում կարող է ընդունել վաճառվող բաժնետոմսերի վաճառքի առաջարկը միևնույն կամ իր համար ավելի լավ գնով՝ համեմատած այն գնի հետ, որն առաջարկել է իր բաժնետոմսերն օտարելու կամ այլ կերպ փոխանցելու ցանկություն հայտնած բաժնետերը: Առաջարկն ընդունելուց հետո 30 (երեսուն) օրվա ընթացքում, առաջարկն ընդունած բաժնետերը և վաճառող բաժնետերը պետք է ավարտեն գործարքի առարկա հանդիսացող բաժնետոմսերի փոխանցումը և գործադրեն իրենց լավագույն ջանքերը՝ ձեռնարկելու, կատարելու կամ իրականացնելու գործողություններ, որոնք կհանգեցնեն սեփականության իրավունքի գրանցմանը: Եթե բաժնետերերը համաձայնվում են ձեռք բերել առաջարկվող բաժնետոմսերը, ապա դրանք բաշխվում են՝

1. բաժնետոմսերի գնման հայտերով որոշվող համամասնությամբ, եթե այդ հայտերում նշված բաժնետոմսերի գումարային քանակը չի գերազանցում առաջարկվող բաժնետոմսերի գումարային քանակին, կամ
 2. բաժնետոմսերի գնման հայտեր ներկայացրած բաժնետերերի միջև համամասնորեն, ըստ՝ Ընկերության Կանոնադրական կապիտալում իրենց մասնակցության տեսակարար կշռի, եթե նրանց կողմից ձեռք բերված փոխադարձ համաձայնության շրջանակներում այլ համամասնություն չի որոշվում:
34. Այն դեպքում, երբ բաժնետոմսերը համամասնորեն բաշխելիս յուրաքանչյուր բաժնետիրոջը բաժին է ընկնում ոչ ամբողջական թվով (կոտորակային) բաժնետոմսեր, ժողովը որոշում է ընդունում բաժնետոմսերի անվանական արժեքի

for sale. The shareholders who have received such a notice within 30 (thirty) days period after its receiving can accept the offer for sale of shares with the same or more favorable price compared to the price which has been offered by the shareholder who wishes to sell or transfer his/her shares in another way. Within 30 (thirty) days after acceptance of the offer the shareholder having accepted the offer and the seller should complete the transfer of shares constituting the subject of the transaction and put their best efforts to take, conduct or implement actions which will result in registration of the ownership right. If shareholders agree to buy the offered shares, these shares are allocated:

1. with the proportion defined on the basis of share purchase applications if the total number of shares indicated in those applications does not exceed the total number of shares offered, or
 2. proportionately among shareholders having submitted share purchase applications according to the percentage of their participation in the Charter Capital of the Company if no other proportion is determined according to their consent.
34. In case if due to distributing the shares proportionately, each shareholder receives shares of decimal value, the Meeting decides on a change of the par value of shares so that each shareholder receives shares of round value.

փոփոխման մասին, այնպես, որ յուրաքանչյուր բաժնետիրոջը բաժին ընկնի ամբողջական թվով բաժնետոմսեր:

35. Եթե բաժնետերերը Գլխավոր տնօրենի կողմից ծանուցումն ուղարկելու կամ առձեռն հանձնելու պահից սկսած 30 կամ բաժնետիրոջ կողմից ծանուցումը Գլխավոր տնօրենին ուղարկելու պահից սկսած 32 օրվա ընթացքում իրենց նախապատվության իրավունքից օգտվելու մտադրության մասին գրավոր ծանուցում չեն ուղարկում Ընկերությանը, ապա Գլխավոր տնօրենի պահանջով կամ սեփական նախաձեռնությամբ Կառավարող Խորհուրդը հրավիրում է արտահերթ ժողով, որի օրակարգում ընդգրկվում է Ընկերության կողմից բաժնետոմսերը ձեռք բերելու կամ հրաժարվելու հարցը: Ընկերության կողմից բաժնետոմսերը ձեռք բերելուց հրաժարվելու դեպքում, բաժնետոմսերը կարող են օտարվել երրորդ անձանց:

36. Բաժնետերն իրավունք ունի վաճառքի առաջարկված բաժնետոմսերը վաճառել Ընկերության այն բաժնետերերին, ովքեր մինչև սույն կետով սահմանված ժամկետի ավարտը ներկայացրել են բաժնետոմսերի գնման հայտ, եթե միաժամանակ առկա է նաև Ընկերության այլ բաժնետերերի կողմից իրենց նախապատվության իրավունքի հրաժարման մասին գրավոր հայտարարություն ուղղված Ընկերության Գլխավոր տնօրենին կամ վաճառող բաժնետիրոջը: Առաջարկ ներկայացրած բաժնետերը գնման հայտի կամ հայտերի առկայության դեպքում, չի կարող միակողմանիորեն հետ կանչել իր առաջարկը, բացառությամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 452-րդ հոդվածով սահմանված դեպքերի:

37. Եթե սույն գլխով սահմանված ժամկետի ավարտից հետո ոչ մի բաժնետեր չի ներկայացրել գնման հայտ և Ընկերությունը որոշում է կայացրել չգնել առաջարկվող բաժնետոմսերը, ապա բաժնետերն իրավունք ունի վաճառքի առաջարկված բաժնետոմսերը վաճառել երրորդ անձի: Բաժնետերը չի կարող բաժնետոմսերը վաճառել երրորդ անձանց ավելի ցածր գնով և այլ նպաստավոր պայմաններով, քան առաջարկվել է մյուս բաժնետերերին և Ընկերությանը:

38. 36-րդ և 37-րդ կետի դրույթները չեն տարածվում բաժնետոմսերի փոխանցման

35. If within a 30-day period after sending the notification or handing it by the General director or within 32 days from the moment of sending the notification by the shareholder to the General director the shareholders have not send a written notification to the Company on their intention to use their preemptive right, upon the request of the General Director or on the initiative of the Company's Supervisory Board the Supervisory Board announces an extraordinary Meeting in the agenda of which the issue of purchase or refusal to purchase the shares by the Company is included. In case the Company refuses to purchase the shares, those can be sold to third parties.

36. The shareholder shall have the right to sell the shares offered for sale to those shareholders of the Company who have submitted a share purchase application until the end of the term stipulated by this clause provided the other shareholders of the Company waived their preemptive rights by written announcement to the General director of the Company or to the shareholder selling the shares. The shareholder having presented the offer to sell his/her shares in case of receipt of purchase application(s) cannot call back his/her offer unilaterally except for cases stipulated in article 452 of Civil Code of RA.

37. If upon expiration of the term specified in this section no shareholder has submitted a purchase application and the Company has decided not to buy the offered shares, the shareholder shall have the right to sell the shares offered for sale to a third party. The shareholder may not sell the shares to third parties with a lower price and other more favorable conditions than those that have been offered to other shareholders.

38. Provisions of the clauses 36 and 37 do not cover those cases of transfer of shares that

այն դեպքերի վրա, որոնք կատարվում են ժառանգության հիմքերով բաժնետոմսերն այլ անձանց անցնելու կանոններով:

39. Ընկերության բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող բաժնետերն իրավունք ունի՝

1. մասնակցել ժողովին. վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով.
2. մասնակցել Ընկերության կառավարմանը.
3. ստանալ շահութաբաժիններ Ընկերության գործունեությունից առաջացած շահույթից.
4. առաջնահերթ կարգով ձեռք բերել Ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը.
5. ստանալ Ընկերության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն (գաղտնի փաստաթղթերից բացի), այդ թվում, տեղեկություններ, որոնք վերաբերում են հաշվապահական հաշվեկշռին, հաշվետվություններին և ընկերության գործունեությանը.
6. ժողովում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի.
7. հանդես գալ ժողովի օրակարգին առնչվող առաջարկություններով.
8. ժողովում քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով.
9. դիմել դատարան՝ ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին ու իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով.
10. Ընկերության լուծարման դեպքում ստանալ Ընկերության գույքի իրեն հասանելի մասը.
11. Ընկերության Կանոնադրական կապիտալը Ընկերության միջոցների հաշվին ավելացնելու դեպքում ստանալ համապատասխան թվով անվճար բաժնետոմսեր.
12. օգտվել ՀՀ օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից:

40. Ընկերության Կանոնադրական

are performed with the rules of transfer of shares to other persons on the bases of heritage.

39. The shareholder owning a share of the Company shall have the right:

1. to participate in the Meeting, with a voting right for issues in the competence of the latter
2. to participate in the governance of the Company
3. to receive dividends from the profits generated from the Company's activities
4. to buy shares allocated by the Company in a priority order
5. to receive any information (except for confidential documents) on the Company's activities including datum relating to balance sheet, financial statements and the activities of the Company
6. to authorize a third party to represent his/her rights in the Meeting
7. to make proposals on the agenda of the Meeting
8. to vote in the Meeting within the limits of votes of shares owned by him/her
9. to apply to the courts with the purpose of appeal against the resolutions taken by the Meeting contradictory to adopted and effective laws and legal acts
10. in case of liquidation of the Company to receive portion of the Company's property according to his/her receivable portion
11. in case of increasing the Company Charter Capital at the expense of the Company's resources to receive shares free of charge in appropriate number
12. to enjoy other rights stipulated by the RA law and this charter.

40. Shareholder(s) having shares with voting

կապիտալի առնվազն 5 տոկոս կազմող ձայնի իրավունք տվող բաժնետոմսերին տիրապետող բաժնետերերը կարող են պահանջել Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգում անկախ աուդիտորի, կողմից: Աուդիտի ծառայությունները վճարում են ստուգում պահանջող բաժնետերերը:

41. Բաժնետերերը պարտավոր են չիրապարակել Ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնիք ներկայացնող տեղեկությունները: Գաղտնիք ներկայացնող տեղեկությունների ցանկը սահմանում է Կառավարող խորհուրդը:

V. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԵՆԸ

42. Ընկերությունում ստեղծվում է պահուստային հիմնադրամ՝ Կանոնադրական կապիտալի 15 տոկոսի չափով: Եթե պահուստային հիմնադրամը նվազում է Կանոնադրական կապիտալի 15 տոկոսից, պահուստային հիմնադրամին հատկացումները պետք է կատարվեն Ընկերության տարեկան շահույթից՝ տարեկան շահույթի առնվազն 5 տոկոսի չափով, ինչպես նաև Ընկերության Նոր արժեթղթերի թողարկման արժեքի և դրանց անվանական արժեքի միջև եղած տարբերությունից ստացվող միջոցներից:

43. Պահուստային հիմնադրամը օգտագործվում է Ընկերության կորուստները (վնասները) ծածկելու, պարտատոմսերը մարելու և Ընկերության բաժնետոմսերը հետ գնելու համար, եթե Ընկերության շահույթը և այլ միջոցները դրա համար չեն բավարարում: Պահուստային հիմնադրամը չի կարող օգտագործվել այլ նպատակների համար:

44. Ընկերությունը ժողովի որոշմամբ կարող է ստեղծել նաև այլ հիմնադրամներ, որոնք կօգտագործվեն, սոցիալական, մշակութային, բարեգործական, արհեստագործության զարգացման, աշխատանքի խրախուսման կամ այլ նպատակների համար:

VI. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԸ

45. Ընկերությունը պարտավոր է վճարել շահութաբաժիններ, եթե որոշում է ընդունել (հայտարարել է) տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց շահութաբաժիններ վճարելու մասին: Շահութաբաժինները վճարվում են Հայաստանի Հանրապետության դրամով:

right which account to at least 5 (five) percent of the Company's Charter Capital may demand the audit of financial and economic activity of the Company by an independent auditor. Audit related expenses shall be covered by such shareholder(s), at the request of which the audit has been conducted.

41. The shareholder shall not disclose confidential information related to the Company's activities. The list of datum containing confidential information shall be defined by the Supervisory Board.

V. THE COMPANY'S FUNDS

42. The Company creates a reserve fund in the amount of 15 per cent of the Company's Charter Capital. If the amount of the reserve fund becomes less than 15 percent of the Company's Charter Capital, the contributions to the fund shall be made from the Company's annual profits in the amount of at least 5 percent of the Company's annual profits as well as from funds generated from the difference between the issuing value of new securities of the Company and their par value.

43. The reserve fund shall be used for covering Company's losses, repaying the bonds and buying back the shares of the Company if the Company's profits and other resources are not enough for those purposes. The reserve fund may not be used for other purposes.

44. By the resolution of the Meeting the Company may create other funds as well, which may be used for social, cultural, benevolent purposes, development of trades, encouragement of workers and other purposes.

VI. THE COMPANY'S DIVIDENDS

45. The Company shall pay dividends if it has made a decision (has announced) on paying dividends on the allocated shares. The dividends shall be paid in drams of the Republic of Armenia.

46. Շահութաբաժինները վճարվում են Ընկերության զուտ շահույթից:

47. Բաժնետոմսերի տարեկան շահութաբաժինների վճարման և շահութաբաժնի չափի մասին որոշումը ընդունվում է Ժողովի կողմից Կառավարող Խորհրդի առաջարկությամբ: Միջանկյալ (եռամսյակային և կիսամյակային) շահութաբաժինների վճարման և շահութաբաժնի չափի մասին որոշումը ընդունվում է Կառավարող Խորհրդի կողմից:

48. Տարեկան շահութաբաժինների չափը չի կարող ավելի լինել Կառավարող Խորհրդի առաջարկածից և պակաս լինել՝ արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից:

49. Տարեկան շահութաբաժինները վճարվում են Ժողովի, իսկ միջանկյալ շահութաբաժինները՝ Կառավարող Խորհրդի կողմից հաստատված ժամկետում:

VII. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՐԺԵՐՈՒԹԵՐԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ՌԵԵՍՐԸ

50. Ընկերությունը բաժնետերերի և այլ արժեթղթերի սեփականատերերի ռեեստրի վարումը հանձնվում է մասնագիտացված կազմակերպությանը, որն ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով իրավունք ունի վարելու անվանական արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստր:

VIII. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

51. Ընկերության կառավարման մարմիններն են.

1. Բաժնետերերի ընդհանուր ժողովը,
2. Խորհուրդ՝ Կառավարող Խորհուրդը,
3. Կոլեգիալ գործադիր մարմին՝ Տնօրինություն
4. Միանձնյա գործադիր մարմինը՝ Գլխավոր տնօրենը:

VIII (Ա). Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը (Ժողովը)

52. Ժողովը կառավարման բարձրագույն մարմինն է: Ընկերությունը պարտավոր է ամեն տարի գումարել Ժողով ֆինանսական տարվա ավարտից հետո վեց ամսվա ընթացքում:

53. Տարեկան ժողովից բացի գումարվող Ժողովները համարվում են արտահերթ:

46. Dividends shall be paid from the net profit of the Company.

47. The resolution on the payment of annual dividends and the amount of dividends of the shares shall be made by the Meeting upon submission of the Supervisory Board. The decision on payment of interim (quarterly and semi-annually) dividends and the amount of those shall be made by the Supervisory Board.

48. The amount of annual dividends may not be more than that suggested by the Supervisory Board and less than the amount of interim dividends already paid out.

49. The Company shall pay annual dividends within the terms stipulated by the Meeting and interim dividends within the term stipulated by the Supervisory Board.

VII. REGISTRY OF SHAREHOLDERS AND HOLDERS OF OTHER SECURITIES OF THE COMPANY

50. Record-keeping of the registry of Company shareholders and holders of other securities shall be delegated to the specialized company which in accordance with the RA law and other legal act is entitled to keep the registry of shareholders and holders of other securities.

VIII. STRUCTURE OF MANAGEMENT BODIES OF THE COMPANY

51. The Company's management bodies are:

1. The general meeting of the shareholders,
2. The Board: Supervisory Board,
3. Collegial executive body: Directorship
4. Sole executive body: General director.

VIII (A). General Meeting of Shareholders of the Company (the Meeting)

52. The Meeting is the supreme body of the Company management. The Company shall hold the annual Meeting once a year within six months from the end of the fiscal year.

53. Any other Meeting held in addition to the annual Meetings shall be considered

Արտահերթ ժողովներ գումարվում են **անհետաձգելի** հարցերի քննարկման համար:
54. Ժողովի բացառիկ իրավասությանն են պատկանում հետևյալ հարցերը.

1. Ընկերության կանոնադրության հաստատումը, դրա մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, Ընկերության կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ (որոշումը ընդունվում է ժողովին մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների $\frac{3}{4}$ -ով), բացառությամբ, եթե դրա իրականացումը բացառապես պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում ընկերության գտնվելու վայրի փոփոխությամբ կանոնադրության փոփոխություններ կատարելով որպիսի իրավասությունը սույն կանոնադրությամբ վերապահվում է Կառավարող խորհրդին.
2. Ընկերության վերակազմակերպումը (որոշումը ընդունվում է ժողովին մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների $\frac{3}{4}$ -ով).
3. Ընկերության լուծարումը (որոշումը ընդունվում է ժողովին մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների $\frac{3}{4}$ -ով, բայց ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների $\frac{2}{3}$ -ից).
4. լուծարային հանձնաժողովի նշանակումը, միջանկյալ, ամփոփիչ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը (որոշումը ընդունվում է ժողովին մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների $\frac{3}{4}$ -ով),
5. հայտարարված բաժնետոմսերի ծավալի, անվանական արժեքի, դասի և տեսակի սահմանումը (որոշումը ընդունվում է ժողովին մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների $\frac{3}{4}$ -ով),
6. Կառավարող խորհրդի անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
7. բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացման, բաժնետոմսերի

extraordinary. The extraordinary Meetings are held for the discussion of the urgent issues.

54. The following issues shall be under the exclusive authority of the Meeting:

1. approval of the Company charter, making amendments and changes in it, approving the new edition of the Company charter (the resolution shall be adopted by a $\frac{3}{4}$ of vote of the owners of voting shares participating in the Meeting), except for the cases than the Amendment is due to the change of the Company's location in the Republic of Armenia in the Company's Charter which power is delegated to the Supervisory Board under this Charter.
2. reorganization of the Company (the resolution shall be adopted by a $\frac{3}{4}$ of vote of the owners of voting shares participating in the Meeting);
3. liquidation of the Company (the resolution shall be adopted by a $\frac{3}{4}$ of vote of the owners of voting shares participating in the Meeting but not less than $\frac{2}{3}$ of votes of owners of voting shares);
4. appointment of the liquidation commission, approval of the interim, summarizing and liquidation balance sheets (the resolution shall be adopted by a $\frac{3}{4}$ of vote of the owners of voting shares participating in the Meeting);
5. deciding on the volume, par value, category and type of declared shares (the resolution shall be adopted by a $\frac{3}{4}$ of vote of the owners of voting shares participating in the Meeting);
6. election of Supervisory Board's members and termination of their rights ahead of the Schedule;
7. with the purpose of reducing the par value of shares – reducing the total

- ընդհանուր քանակի կրճատման նպատակով Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերման, ինչպես նաև Ընկերության կողմից ձեռք բերված կամ հետ գնված բաժնետոմսերի մարման ճանապարհով Կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը (որոշումը ընդունվում է ժողովին մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, բայց ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից),
8. բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով Կանոնադրական կապիտալի չափի ավելացումը,
 9. ժողովի վարման կարգի հաստատումը,
 10. հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը,
 11. Ընկերության վերստուգողի ընտրությունը և նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
 12. Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը (ժողովին մասնակցող քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ),
 13. Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, ինչպես նաև տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը: Նշված հարցերը քննարկվում են բացառապես տարեկան ժողովներում: Եթե սահմանված ժամկետում տարեկան ժողովը տեղի չի ունեցել, ապա արտահերթ ժողով կարող է հրավիրվել միայն Ընկերության լուծարման կամ սույն ենթակետում նշված հարցերը քննարկելու համար: Նշված հարցերով հրավիրված արտահերթ ժողովում այլ հարցեր քննարկվել չեն կարող, բացառությամբ
- number of shares, reduction of the charter capital by means of purchase of allocated shares by the Company as well as repayment of shares bought or bought back by the Company (the resolution shall be adopted by a 3/4 of vote of the owners of voting shares participating in the Meeting, but not less than 2/3 of votes of owners of voting shares);
8. increase of the Company Charter Capital through the increase of the share par value or allocation of additional shares;
 9. approval of the manner of conducting the Meeting;
 10. establishment of the counting committee;
 11. election of the Company's controller and termination of its authorities ahead of the schedule;
 12. approval of the person conducting the audit of the Company (the resolution shall be adopted by a simple majority vote of the owners of voting shares participating in the Meeting);
 13. approval of the Company annual statements, balance sheets, profit and loss accounts, distribution of profit and loss, as well as decision-making on the annual dividend payment and approval of the annual dividend size. If an annual meeting has not taken place in the prescribed time limits, an extraordinary meeting may be summoned only for the purpose of discussing issues concerning the liquidation of the Company or the issues referred to in this sub-point. No other issues may be discussed in an extraordinary meeting summoned to discuss the mentioned issues, except for issues related to the reduction of the authorized capital triggered by the decisions adopted on the issues referred to in this sub-point;

սույն ենթակետում նշված հարցերով կայացված որոշումներով պայմանավորված կանոնադրական կապիտալի նվազեցման դեպքերի.

14. Ընկերության Գլխավոր տնօրենի, Կառավարող խորհրդի անդամների և վերստուգողի աշխատանքի վարձատրության պայմանների որոշումը,
15. Ընկերության կողմից դուստր կամ կախյալ ընկերությունների, հոլդինգային ընկերությունների, առևտրային կազմակերպությունների այլ միությունների ստեղծումը, ինչպես նաև դրանցում մասնակցությունը,
16. «Բաժնետիրական Ընկերությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով շահագրգռվածության առկայության դեպքում, գործարքների կնքման որոշման կայացումը (գործարքը կնքելու մասին որոշումն ընդունվում է քվեարկող բաժնետոմսերի սեփականատեր և գործարքի կատարման մեջ շահագրգռվածություն չունեցող բաժնետերերի ձայների պարզ մեծամասնությամբ), մասնավորապես, եթե
 - i. գործարքով վճարման ենթակա գումարը կամ գործարքի առարկա հանդիսացող գույքի օրենքով սահմանված կարգով հաշվարկված շուկայական արժեքը հավասար է Ընկերության ակտիվների արժեքի առնվազն 10 տոկոսին.
 - ii. գործարքը կամ մի շարք փոխկապակցված գործարքներ կնքվում են Ընկերության քվեարկող բաժնետոմսերի կամ քվեարկող բաժնետոմսերի փոխարկվող Ընկերության այլ արժեթղթերի տեղաբաշխման նպատակով, և որոնց քանակն ավելի է Ընկերության արդեն տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի քանակի 2 տոկոսից:
 - iii. եթե խորհրդի բոլոր անդամները շահագրգիռ անձինք են ճանաչվել, երբ օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում շահագրգռվածության առկայությամբ գործարքը ենթակա է հաստատման Կառավարող խորհրդի

14. deciding on the remuneration of the General director, Supervisory Board members and controller;
15. creation of daughter and subsidiary companies, holding companies, commercial organizations and other associations as well as participation in those;
16. approval of the interested-party transactions in the matter stipulated by the Law of RA “On Joint Stock Companies” (the resolution on conclusion of the transaction shall be adopted by the simple majority of votes of the owners of voting share owners who are not interested part of the transaction); in particular, if
 - i. the amount payable under the transaction and the market value — estimated in the manner prescribed by law — of the property constituting the subject of the transaction exceeds 10 percent of the value of the Company assets;
 - ii. the transaction or a series of related transactions are concluded for the purpose of allocation of voting shares of the Company or other securities of the Company convertible into voting shares, and the amount of which is more than 2 percent of the number of already allocated voting shares of the Company.
 - iii. All the members of the board have been identified as interested parties when the interested-party transaction subject to approval by the Supervisory Board under the Law and this Charter.
 - iv. In case the interested-party transaction is a large-scale transaction defined under subclause 17 of Clause 54 of the Charter.

կողմից:

- iv. եթե շահագրգռվածության առկայությամբ գործարքը սույն կանոնադրության 54-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված խոշոր գործարք է:

17. Ընկերության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը (որոշումը ընդունվում է ժողովին մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով):

Խոշոր են համարվում մեկ կամ մի քանի փոխկապված այն գործարքները, որոնք

- i. ուղղակի կամ անուղղակի կապված են Ընկերության կողմից գույքի ձեռքբերման, օտարման կամ գույքի օտարման հնարավորության հետ, բացառությամբ Ընկերության բնականոն տնտեսական գործունեության շրջանակներում կատարվող գործարքների, և որոնց արժեքը գործարքը կնքելու մասին որոշում ընդունելու պահի դրությամբ կազմում է Ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի 50 և ավելի տոկոսը,
- ii. որոնց առարկա է հանդիսանում Ընկերության հասարակ (սովորական) կամ հասարակ (սովորական) բաժնետոմսերի փոխարկվող արտոնյալ բաժնետոմսերի տեղաբաշխումը, որը կազմում է Ընկերության կողմից արդեն տեղաբաշխված հասարակ (սովորական) բաժնետոմսերի 50 և ավելի տոկոսը):

18. բաժնետոմսերի համախմբումը կամ բաժանումը (որոշումը ընդունվում է ժողովին մասնակցող՝ քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով, բայց ոչ պակաս քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ից),

19. Ընկերության Կառավարող Խորհրդի և վերստուգողի գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը,

20. Ընկերության Գլխավոր տնօրենի և կոլեգիալ գործադիր մարմնի

17. conclusion of large-scale transactions related to the sale and acquisition of Company assets (the resolution shall be adopted by a 3/4 of vote of the owners of voting shares participating in the Meeting).

Large-scale transactions are deemed to one or more interconnected transactions

- i. which directly or indirectly related to the acquisition, alienation or the possibility of alienation of property by the Company, except for the transactions performed within the normal economic activity of the Company, and the value of which upon concluding the transaction as of the moment of adopting the decision, is 50 percent or more of the book value of the Company's assets,
- ii. the subject matter of which is either common (ordinary) shares of the Company or preferred shares of the Company which are convertible to common (ordinary) shares of the Company should the number of those shares be 50 percent or more of the already placed shares of the Company.

18. consolidation and splitting of shares (the resolution shall be adopted by a 3/4 of vote of the owners of voting shares participating in the Meeting, but not less than 2/3 of votes of owners of voting shares);

19. approval of internal documents regulating the activities of the Supervisory Board and the controller of the Company;

20. Appointing and early terminating the authorities of the General director and of

անդամների նշանակումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, ինչպես նաև Ընկերության Գլխավոր տնօրենի և կոլեգիալ գործադիր մարմնի անդամների նշանակման պայմանների որոշումը և դրանց փոփոխումը, ներառյալ նրանց աշխատավարձի չափը և պայմանները:

21. Կոլեգիալ գործադիր մարմնի անդամներից այն պաշտոնատար անձի նշանակումը որը Գլխավոր տնօրենի ժամանակավոր բացակայության դեպքում պետք է իրականացնի Գլխավոր տնօրենի իրավասությունները և գործի որպես Գլխավոր տնօրենի պաշտոնակատար մինչև նոր Գլխավոր տնօրենի նշանակումը կամ Գլխավոր տնօրենի ժամանակավոր բացակայության հիմքերի վերացումը:

22. Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը և հետգնումը, բացառությամբ ՀՀ օրենքով թույլատրված դեպքերում և կարգով Ընկերության կողմից իր տեղաբաշխված բաժնետոմսերը հորիզոնի որոշմամբ ձեռքբերելու դեպքի.

23. ՀՀ օրենքներով և սույն կանոնադրությամբ սահմանված այլ որոշումների ընդունումը:

55. Սույն կանոնադրության 54 կետով սահմանված հարցերով որոշումների ընդունումը վերապահվում է Ժողովի բացառիկ իրավասությանը և չի կարող փոխանցվել Կառավարող հորիզոնին կամ Գլխավոր տնօրենին: 54 կետի 2-րդ, 16-րդ, 17-րդ, 21-րդ, 22-րդ և 23-րդ ենթակետերով նախատեսված հարցերով որոշումներն ընդունվում են Ժողովի կողմից միայն Կառավարող հորիզոնի ներկայացմամբ:

56. Ժողովն իրավունք չունի քննարկել և որոշումներ ընդունել այն հարցերի շուրջ, որոնք ՀՀ օրենքներով և սույն կանոնադրությամբ չեն սահմանվել որպես նրա իրավասություն:

57. Ժողովի որոշումներն ընդունվում են Ժողովին մասնակցող՝ ձայնի իրավունք տվող (քվեարկող) բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, եթե ՀՀ օրենքներով կամ

the members of the collegial executive body, as well as deciding and changing the terms and conditions of appointment of the General director and the members of the collegial executive body, including the amount and conditions of their salaries.

21. Appointing an official from the members of the collegial executive body who in case of temporary absence of the General director shall exercise the powers of General director and be an Acting General director until the appointment of a new General director or elimination of grounds causing the temporary absence of the General director.

22. The purchase and buy back of the Company's shares, except for the Company's purchase of its own shares under the decision of the Supervisory Board in the cases and manner allowed under the RA law.

23. Making the other decision stipulated under the Armenian laws and this Charter.

55. The decision-making on the issues defined by the article 54 of this charter shall be the exclusive authority of the Meeting and may not be delegated to the competence of the Supervisory Board or the General director. Resolutions on the issues listed in subparagraphs 2, 16, 17, 21, 22 and 23 of Clause 54 shall be adopted only upon presentation of the Supervisory Board.

56. The Meeting shall not have the right to discuss and make decisions on issues, which have not been defined as its authorities by the laws of the RA and this charter.

57. The decisions of the Meeting shall be made by simple majority of the voting share owners, unless a bigger number of votes are specified by the laws of the RA or this charter.

սույն կանոնադրությամբ ձայների ավելի շատ քանակ սահմանված չէ:

58. Ժողովն իրավունք չունի փոփոխել ժողովի օրակարգը, ինչպես նաև որոշումներ ընդունել օրակարգում չընդգրկված հարցերի վերաբերյալ:

59. Ժողովի որոշումները կարող են ընդունվել հեռակա քվեարկությամբ (հարցման միջոցով):

60. Տարեկան ժողովում դրված հարցերի վերաբերյալ հեռակա կարգով քվեարկության ժամանակ քվեաթերթիկները պետք է տրամադրվեն բաժնետերերին՝ լրացրած քվեաթերթիկները Ընկերության կողմից ընդունելու ավարտելու պահից առնվազն 30 օր շուտ: Էլեկտրոնային, հեռատիպային կամ հեռախոսային կապի միջոցներով ժողովի անցկացման քվեարկության դեպքում քվեաթերթիկները (այդ թվում՝ Էլեկտրոնային քվեաթերթիկները) պետք է տրամադրվեն բաժնետերերին ժողովի անցկացման պահից առնվազն 7 օր առաջ:

61. Ժողովին մասնակցելու իրավունք ունեն Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը (անվանատերերը), իրենց պատկանող բաժնետոմսերի քանակին և անվանական արժեքին համապատասխան ձայների քանակով:

62. Խորհրդակցական ձայնի իրավունքով ժողովին կարող են մասնակցել նաև Ընկերության բաժնետեր չհանդիսացող Կառավարող Խորհրդի անդամները, Գլխավոր տնօրենը, ինչպես նաև Ընկերության վերստուգողը և աուդիտի իրականացնող անձը (եթե նրանց եզրակացությունն առկա է գումարվող ժողովի նյութերում):

63. Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվում է Կառավարող Խորհրդի կողմից սահմանված տարվա, ամսվա, ամսաթվի դրությամբ՝ Ընկերության բաժնետերերի ռեեստրի տվյալների հիման վրա: Եթե ժողովը գումարվում է հեռակա քվեարկությամբ, ապա դրան մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմվելու տարին, ամիսը, ամսաթիվը սահմանվում է ժողովի գումարման ամսաթվից առնվազն 35 օր շուտ:

64. Ընկերության բաժնետերերը, ինչպես նաև ժողովում խորհրդակցական ձայնի

58. The Meeting shall not have the right to change the Meeting agenda, as well as to make decisions on issues not included in the agenda.

59. The decisions of the Meeting may be made by a correspondence voting (through inquiry).

60. During the correspondence voting, regarding questions raised at the annual Meeting, the ballots should be given to the shareholders at least 30 days before the deadline of accepting the filled in ballots by the Company. Should the voting in the Meeting performed by voting electronic, teletype or telecommunication means (including by using electronic ballots) the ballots shall be given to the shareholders at least 7 days before the day of holding the Meeting.

61. Shareholders – owners of allocated shares of the Company shall have the right to participate in the Meeting with vote number corresponding to the number of shares owned by them and to the respective par value.

62. Members of the Supervisory Board and General director as well as the controller and auditor (if their conclusion is present in the materials of the Meeting held) of the Company who are not shareholders of the Company may also participate in the Meeting with a right of consultative vote.

63. The list of shareholders who have the right to participate in the Meeting shall be prepared as of the date specified by the Supervisory Board based on data of the Company's shareholders' registry. If the Meeting is held by correspondence voting, the date of preparing of the list of shareholders who have the right to participate shall be set at least 35 days before the date of holding the Meeting.

64. The Company's shareholders as well as other persons having the right to participate in

իրավունքով մասնակցելու իրավունք ունեցող անձինք ծանուցվում են ժողովի գումարման մասին՝ նրանց պատվիրված նամակով համապատասխան գրավոր ծանուցում ուղարկելու կամ պատշաճ կերպով ստորագրված ծանուցումն առձեռն հանձնելու միջոցով: Ժողովի գումարման մասին գրավոր ծանուցումը պետք է ուղարկվի կամ առձեռն հանձնվի ժողովի գումարման օրվանից առնվազն 20 (քսան) օր առաջ, եթե ՀՀ օրենքով ավելի երկար ժամկետ սահմանված չէ: Ժողովի մասին ծանուցումը պետք է պարունակի՝

1. Ընկերության ֆիրմային անվանումը և գտնվելու վայրը,
 2. Ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը,
 3. Ժողովի օրակարգում ընդգրկված հարցերը,
 4. բաժնետերերի ծանոթանալու կարգը ժողովի օրակարգում քննարկվող հարցերին վերաբերող տեղեկություններին և նյութերին, որոնք պետք է ներկայացվեն բաժնետերերին ժողովը նախապատրաստելու ընթացքում:
 5. Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը
65. Ժողովի նախապատրաստման ընթացքում Կառավարող խորհուրդը, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ Ժողովը գումարող անձինք որոշում են՝
1. Ժողովի գումարման տարին, ամսաթիվը, ժամը և վայրը,
 2. Ժողովի օրակարգը,
 3. Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը,
 4. Ժողովի գումարման մասին բաժնետերերին ծանուցելու կարգը,
 5. բաժնետերերին ժողովի նախապատրաստման ընթացքում տրամադրվող տեղեկությունների և նյութերի ցուցակը,
 6. քվեաթերթիկների ձևը և բովանդակությունը, եթե քվեարկությունները կատարվելու են քվեաթերթիկներով:
66. Ընկերության բաժնետերերի արտահերթ ժողովը գումարվում է

the Meeting with a consultative vote shall be notified about holding a Meeting through sending a written notification by an ordered letter or by handing over with the signature on receipt. The written notification on holding the Meeting shall be sent or handed over in at least 20 (twenty) calendar days before holding the Meeting unless longer period is specified by the RA law. The notification on the Meeting shall include:

1. Company's name and location
 2. date, month, year, time and place of holding the Meeting
 3. issues included in the agenda of the Meeting
 4. the procedure of disclosure of the information and materials related to issues covered by the Meeting agenda which should be presented to shareholders during the preparation of the Meeting
 5. date, month, year of preparing the list of shareholders who have the right to participate in the Meeting.
65. During the preparation of the Meeting the Supervisory Board and, in cases stipulated by the law, the persons organizing the Meeting determine:
1. the date, month, year, time and place of holding the Meeting
 2. Meeting agenda
 3. date, month, year of preparing the list of shareholders who have the right to participate in the Meeting
 4. the procedure of notifying the shareholders on holding the Meeting
 5. list of information and materials to be provided to shareholders during the preparation of the Meeting
 6. the form and content of the voting ballots if voting is to be organized through voting ballots.
66. The extraordinary Meeting of the Company's shareholders is held under decision

Կառավարող խորհրդի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ, Ընկերության գործադիր մարմնի, վերստուգողի, Ընկերության աուդիտին իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Ընկերության՝ առնվազն 10 տոկոս բնավորող բաժնետոմսերի սեփականատեր բաժնետիրոջ (բաժնետերերի) պահանջով:

67. Արտահերթ ժողովի գումարման կամ արտահերթ ժողովի գումարումը մերժելու մասին Կառավարող խորհրդի որոշումը պետք է ընդունվի 10 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե սահմանված ժամկետում Կառավարող խորհուրդն արտահերթ ժողովի գումարման մասին որոշում չի ընդունում կամ որոշում է ընդունում դրա գումարումը մերժելու մասին, ապա արտահերթ ժողովը կարող են գումարել ժողովի գումարման մասին պահանջը ներկայացրած անձինք:

68. ՀՀ օրենքով և ժողովի որոշմամբ սահմանված դեպքերում Ընկերությունում ստեղծվում է հաշվիչ հանձնաժողով, որի կազմը չի կարող երեք հոգուց պակաս լինել: Հաշվիչ հանձնաժողովի անդամներ չեն կարող լինել Կառավարող խորհրդի անդամները, վերստուգողը, աուդիտորը, Գլխավոր տնօրենը, ինչպես նաև այն անձինք, որոնք առաջադրված են այդ պաշտոնների թեկնածուներ:

69. Հաշվիչ հանձնաժողովը որոշում է ժողովի բնիքում, ապահովում է բնավորության սահմանված կարգը, բնավորության մասնակցելու իրավունքը, իրականացնում է ձայների հաշվարկը, ամփոփում է բնավորության արդյունքները և կազմում է արձանագրություն և Ընկերության արխիվ է փոխանցում բնաբերթիկները:

70. Ընկերության բաժնետերը ժողովում մասնակցելու իր իրավունքը կարող է իրականացնել անձամբ կամ լիազորված ներկայացուցչի միջոցով (լիազորագրի առկայության դեպքում):

71. Ժողովն իրավասու է (բնիքում ունի), եթե մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Ընկերության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են Ընկերության ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 50-ից ավելի տոկոսին:

72. Բնիքում լիազորության դեպքում հայտարարվում է նոր ժողովի գումարման

of the Supervisory Board, on the Supervisory Board's initiative, at the request of the executive body of the Company, the controller, the auditor, or shareholder(s) owning at least 10 per cent of voting shares of the Company as of the moment of submitting that request.

67. The Supervisory Board's decision on holding the extraordinary Meeting or refusal to hold an extraordinary Meeting shall be made within 10 business days after submission of the request. If within a specified period the Supervisory Board does not make a decision to hold the extraordinary Meeting or to refuse to do that, the extraordinary Meeting can be held by the persons having submitted the request for holding a Meeting.

68. In cases stipulated by the RA law and by the decision of the Supervisory Board, a counting committee shall be formed in the Company, which should consist of at least 3 members. The members of the Supervisory Board, the controller, auditor, and the General director, as well as persons who have been suggested as candidates for these positions may not be members of the counting committee.

69. The counting committee decides on the quorum of the Meeting, ensures the procedure stipulated for voting, the right to vote, implements the vote count, summarizes the results of voting and prepares the minutes and transfers the voting questionnaires to the archive of the Company.

70. The Company's shareholder may exercise his/her right to participate in the Meeting in person or through an authorized representative (in case of presence of a duly formalized power of attorney).

71. The Meeting shall be deemed authorized (having quorum) if shareholders owning more than 50 per cent of voting shares of the Company in total have been registered as of the moment of the end of the registration of participants.

72. In case of absence of quorum, the date for holding the new Meeting shall be

տարին, ամիսը, ամսաթիվը: Նոր ժողովի գումարման դեպքում օրակարգի փոփոխություն չի թույլատրվում:

73. Չկայացած ժողովի փոխարեն գումարվող նոր ժողովն իրավասու է, եթե մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են Ընկերության բաժնետերերը (նրանց ներկայացուցիչները), որոնք համատեղ տիրապետում են Ընկերության տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի 30-ից ավելի տոկոսին:

74. Քվեարկությունը ընդհանուր ժողովում իրականացվում է «Ընկերության մեկ քվեարկող բաժնետոմս՝ մեկ ձայն» սկզբունքով, բացառությամբ ՀՀ օրենքներով նախատեսված այն դեպքերի, երբ կիրառվում է գումարային քվեարկության սկզբունքը:

75. Ժողովում քվեարկությունները կատարվում են քվեաթերթիկների միջոցով, իսկ մինչև 25 բաժնետեր ունենալու դեպքում առանց քվեաթերթիկների, եթե Կառավարող խորհուրդն այլ բան չի որոշում: Եթե քվեարկությունները կատարվել են առանց քվեաթերթիկների, ապա ժողովի արձանագրությունները պետք է ստորագրվեն նաև ժողովին մասնակցած բաժնետերերի կողմից:

76. Այն դեպքում, երբ Ընկերության ձայնի իրավունք տվող բոլոր բաժնետոմսերը պատկանում են մեկ բաժնետիրոջը, Ընկերության միակ բաժնետերն իրավունք ունի կայացնել միանձնյա գրավոր որոշումներ ժողովի իրավասությանը վերաբերող բոլոր հարցերի շուրջ: Այդ դեպքում սույն կանոնադրության դրույթները, որոնք սահմանում են ժողովի նախապատրաստման, գումարման և անցկացման կարգ, չեն կիրառվում, բացառությամբ այն դրույթների, որոնք սահմանում են տարեկան ժողովի գումարման ժամկետը:

VIII (A). Կառավարող խորհուրդը

77. Ժողովի որոշմամբ Ընկերությունում ստեղծվում է Կառավարող խորհուրդ: Կառավարող խորհուրդն իրականացնում է գործունեության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք վերապահված են ժողովի բացառիկ իրավասությանը:

78. Կառավարող խորհրդի բացառիկ իրավասությանն են պատկանում՝

1. Ընկերության գործունեության հիմնա-

announced. In case of holding a new Meeting, change of agenda shall not be permitted.

73. The new Meeting to be held instead of the canceled Meeting shall be deemed authorized (having quorum) if shareholders (their representatives) owning more than 30 per cent of allocated voting shares of the Company in total have been registered as of the moment of the end of the registration of participants.

74. In the Meeting the voting shall be conducted with the principle "one vote for one voting share of the Company" except for those cases stipulated by the laws of RA when the principle of "cumulative voting" shall be applied.

75. The voting during Meetings shall be made through voting sheets and if there are less than 25 shareholders, the voting shall be made without voting sheets unless the Supervisory Board determines otherwise. If the voting has been made without voting sheets, the Minutes of the Meeting has to be signed also by shareholders who participated in the Meeting.

76. In case all Company's voting shares are owned by the sole shareholder decisions on all issues in the competence of the Meeting are to be made unilaterally by this shareholder in writing. In this case provisions of this charter defining the procedure of preparation, convening and holding of the Meeting shall not apply except for the provisions on the time of holding of the annual Meeting.

VIII (B). Supervisory Board

77. At the Resolution of the Meeting the Supervisory Board is formed in the Company. The Supervisory Board effects the general management of the Company activities, with the exception of issues attributed to exclusive competence of the Meeting.

78. The following issues shall be under the exclusive authority of the Supervisory Board:

1. determination of the main directions of

- կան ուղղությունների որոշումը,
2. տարեկան և արտահերթ ժողովների գումարումը, բացառությամբ սույն կանոնադրության 67 կետով սահմանված դեպքերի,
3. ժողովների օրակարգի հաստատումը,
4. ժողովներին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարվա, ամսվա, ամսաթվի հաստատումը, ինչպես նաև բոլոր այն հարցերի լուծումը, որոնք կապված են ժողովների նախապատրաստման ու գումարման հետ և վերապահված են Կառավարող խորհրդի իրավասությանը՝ ՀՀ օրենքի դրույթների համապատասխան,
5. սույն կանոնադրության 54 կետի 2-րդ, 16-րդ, 17-րդ, 21-րդ, 22-րդ և 23 ենթակետերով նախատեսված հարցերով ժողովի որոշումների խախտման վերաբերյալ նախնական ուսումնասիրություն և առաջարկությունների ձևակերպում և ներկայացումը ժողովի քննարկմանը
6. գույքի շուկայական արժեքի որոշումը «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքում, ներառյալ գույքի շուկայական արժեքի սահմանման համար անկախ գնահատողի ծառայություններից օգտվելու վերաբերյալ որոշմամբ կայացումը բոլոր այն դեպքերում, երբ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով պարտադիր է գույքի շուկայական արժեքի գնահատումը կատարել անկախ գնահատողի կողմից,
7. ՀՀ օրենքով նախատեսված կարգով և դեպքերում ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի, պարտատոմսերի և այլ արժեթղթերի ձեռքբերումը, պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխումը,
8. ընկերության վերստուգողի վարձատրության և ծախսերի փոխհատուցումների վճարման կարգի և պայմանների վերաբերյալ ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը,
9. ընկերության աուդիտի իրականացումը

- the Company's activities;
2. convocation of annual and extraordinary Meetings except for cases specified in clause 67 of this charter;
3. approval of the agenda of the Meetings;
4. approval of the date of preparation of the list of shareholders having the right to participate in the Meetings as well as addressing of all those issues which are connected with preparing and holding the Meetings and are under the authority of the Supervisory Board according to provisions of the laws of the RA;
5. Preliminary consideration and formulation of the recommendations with respect to the drafts of the decisions of the Meeting on the issues specified in Sub-clauses 2, 16, 17, 21, 22 and 23 of Clause 54 of this Charter and presentation of such issues to the Meeting;
6. determination of the market value of the property according to procedures stipulated by the RA law "On Joint Stock Companies", including the decision to use the services of an independent appraiser to determine the market value of the property, in all cases when the RA Law "On Joint Stock Companies" requires the determination of the property's market value to be performed by an independent appraiser,
7. purchase of the Company's allocated shares, bonds and other securities, and placement of the Company's bonds and other securities according to the procedure and cases stipulated by the laws of the RA;
8. preparation of recommendations for the Meeting on the procedure and conditions of remuneration of the Company's controller and compensation of respective expenses;
9. submission of recommendations to the

- անձի հաստատմանը վերաբերող առաջարկությունների ներկայացումը ժողովին և նրա վճարման չափի սահմանումը,
10. Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ ժողովին առաջարկությունների նախապատրաստումը,
 11. Ընկերության բաժնետոմսերով վճարվող միջանկյալ շահութաբաժինների չափի և վճարման կարգի սահմանումը,
 12. Ընկերության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը,
 13. Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին այն փաստաթղթերի հաստատումը, որոնք վերապահված չեն ժողովի կամ Գլխավոր տնօրենի իրավասությանը,
 14. Ընկերության մասնաճյուղերի, ներկայացուցչությունների ու հիմնարկների ստեղծումը, և այլ կազմակերպություններին մասնակցելու վերաբերյալ որոշումների ընդունումը այն դեպքում, երբ նման մասնակցությունը չի հանդիսանում ժողովի հաստատման ենթակա խոշոր գործարք,
 15. Կառավարող խորհրդի նախագահի և նախագահի տեղակալի ընտրությունը,
 16. Շահագրգռվածության առկայությամբ գործարքների հաստատումը, եթե նման գործարքի հաստատման հարցը չի պատկանում ժողովի բացառիկ իրավասությանը,
 17. Ընկերության գույքի ձեռքբերման կամ օտարման հետ կապված գործարք կնքելու մասին որոշումը, եթե այդ գույքի արժեքը գործարքը կնքելու մասին որոշում ընդունելու պահի դրությամբ կազմում է Ընկերության ակտիվների հաշվեկշռային արժեքի ոչ պակաս, քան 25 տոկոսը և ոչ ավել, քան 50 տոկոսը: Սույն կետի իմաստով գործարք է համարվում Ընկերության գույքի ձեռքբերման կամ օտարման հետ կապված մեկ կամ մի քանի փոխկապված գործարքները, որոնք,
 - Meeting on approval of the auditor of the Company and determination of the auditor's remuneration;
10. preparation of recommendations to the Meeting on the size and payment procedure of annual dividends paid on the Company's shares;
 11. definition of the size and payment procedure of interim dividends paid on the Company's shares;
 12. use of reserve and other funds of the Company;
 13. approval of those internal documents regulating the activities of management bodies of the Company which are not in the competence of the Meeting or the General director;
